ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
# ՈՐՈՇՈՒՄ

.....օգոստոսի 2014 թվականի N ...

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՔԱՂԱՔԻ ՊԱՀԱԾՈՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆԻ ՆԱԽԿԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԸ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՎԱՐՏԻՑ ՀԵՏՈ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N 1414-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻՆ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի ապրիլի 12-ի N 501-Ն որոշումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 19-ի <<Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին>> N 1414-Ն որոշման մեջ կատարել լրացումներ՝ համաձայն N 1, N 2 և N 3 հավելվածների:

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի պահածոների գործարանի նախկին վարչական շենքը բնակելի շենքի վերակառուցելու շինարարական աշխատանքների ավարտից հետո պետական գրանցման աշխատանքները պատշաճ կազմակերպելու ու իրականացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանին Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից 2014 թվականի ինն ամսում հատկացնել 2711.4 հազար դրամ (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Մասնագիտական ծառայություններ» հոդվածով՝ 1,330.4 հազար դրամ և «Պարտադիր վճարներ» հոդվածով՝ 1,381.0 հազար դրամ):

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Պ. Սաֆարյան

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2014 թվականի
-ի N -Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N 1414-Ն ՈՐՈՇՄԱՆ N 11 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 11.52 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԼՐԱՑՈՒՄԸ

| Չափորոշիչները | | Ցուցանիշների փոփոխություն (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում) | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Ոչ ֆինանսական ցուցանիշներ | | Ֆինանսական ցուցանիշներ | |
| | | Ինն ամիս | Տարի | Ինն ամիս | Տարի |
| *ՄԱՍ Գ: Նախարարի պատասխանատվության ներքո իրականացվող քաղաքականության միջոցառումների և ֆինանսական կառավարման արդյունքների ցուցանիշները* | | | | | |
| 1. Քաղաքականության միջոցառումներ | | | | | |
| 1.2. Տրանսֆերտներ | | | | | |
| Ծրագրային դասիչը | Անվանումը<br>Աջակցություն բնակիչների վերաբնակեցմանը<br>*Նկարագրություն՝*<br>ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի պահածոների գործարանի նախկին վարչական շենքը բնակելի շենքի վերակառուցելու շինարարական աշխատանքների ավարտից հետո պետական գրանցման աշխատանքների իրականացում | | | | |
| 1098 ԾՏ05 | | | | | |
| Շահառուների քանակը | | 142 | 142 | x | x |
| Գումարը (հազար դրամ) | | x | x | 2,711.4 | 2,711.4 |
| Տրանսֆերտի վճարման հաճախականությունը | | | | | |
| *Շահառուների ընտրության չափանիշները* | | | | | |
| *Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը*<br>1098 Բնակարանային ապահովում | | | | | |
| *Վերջնական արդյունքի նկարագրությունը*<br>ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի պահածոների գործարանի նախկին վարչական շենքը բնակելի շենքի վերակառուցելու շինարարական աշխատանքների ավարտից հետո բնակիչներին բնակարաններով ապահովում | | | | | |

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2014 թվականի
-ի N -Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N 1414-Ն ՈՐՈՇՄԱՆ N 11 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 12 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԼՐԱՑՈՒՄԸ

| Ծրագրային դասիչը | | Գործառնական դասիչը (բաժին/խումբ/դաս) | Ծրագիրը/քաղաքականության միջոցառումը | ՀՀ 2014 թվականի պետական բյուջե (հազար դրամ) |
|---|---|---|---|---|
| Ծրագիրը | Միջոցառումը | | | |
| 1098 | | | ԾՐԱԳԻՐ | 2,711.4 |
| | | | Բնակարանային ապահովում | |
| | | | **Ծրագրի նկարագրությունը** | |
| | | | Բնակության վայր չունեցող անօթևան անձանց բնակարանային ապահովման աջակցություն | |
| | | | **Վերջնական արդյունքի նկարագրությունը** | |
| | | | Ծրագրի իրականացումը կնպաստի Հանրապետությունում մշտական բնակության վայր չունեցող անօթևան անձանց բնակարանային ապահովմանը | |
| | ԾՏ05 | | Քաղաքականության միջոցառումներ. Տրանսֆերտներ | 2,711.4 |
| | | | **Տրանսֆերտի անվանումը** | |
| | | | Աջակցություն բնակիչների վերաբնակեցմանը | |
| | | | **Տրանսֆերտի նկարագրությունը** | |
| | | | ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի պահածոների գործարանի նախկին վարչական շենքը բնակելի շենքի վերակառուցելու շինարարական աշխատանքների ավարտից հետո պետական գրանցման աշխատանքների իրականացում | |

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2013 թվականի
-ի N -Ն որոշման

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N 1414-Ն ՈՐՈՇՄԱՆ N 12 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

| Անվանումը | | | | Գնման ձևը | Չափման միավորը | Միավորի գինը | Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով) | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | Քանակը | Գումարը (հազար դրամով) |
| ՀՀ Արմավիրի մարզպետարան | | | | | | | | 1,330.4 |
| Բաժին N 11 | Խումբ N 01 | Դաս N 01 | ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ | | | | | 1,330.4 |
| 1. ՀՀ կառավարությանպահուստային ֆոնդ, այդ թվում՝ | | | | | | | | 1,330.4 |
| ՄԱՍ III. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | | | | | | | 1,330.4 |
| 98113000-1 | Մասնագիտացված կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայություններ | | | ԲԸԱՀ | դրամ | 1,330,400.0 | 1.0 | 1,330.4 |

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

### <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՔԱՂԱՔԻ ՊԱՀԱԾՈՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆԻ ՆԱԽԿԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԸ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՎԱՐՏԻՑ ՀԵՏՈ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N 1414-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻՆ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. **Անհրաժեշտությունը**

Նախագծի ընդունումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի պահածոների գործարանի նախկին վարչական շենքը բնակելի շենքի վերակառուցելու շինարարական աշխատանքների ավարտից հետո պետական գրանցման աշխատանքները պատշաճ կազմակերպելու ու իրականացնելու համար:

2. **Ընթացիկ իրավիճակը և խնդիրները**

ՀՀ կառավարության 12.04.2012թ. N 501-Ն որոշմամբ ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի պահածոների գործարանի նախկին վարչական շենքը բնակելի շենքի վերակառուցման համար 2012 թվականին ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից ՀՀ Արմավիրի մարզպետարանին է հատկացվել է 244,170.0 հազ. դրամ:

Վերը նշված աշխատանքների ավարտից հետո անհրաժեշտություն է առաջացել կազմակերպել և իրականացնել պետական գրանցման աշխատանքներ:

3. **Կարգավորման նպատակը և բնույթը**

Նախագծով նախատեսվում է ՀՀ 2014 թվականի պետական բյուջեով նախատեսված ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից հատկացնել 2,711.4 հազ. դրամ պետական գրանցման աշխատանքներ պատշաճ իրականացնելու համար:

4. **Ակնկալվող արդյունքը**

ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի պահածոների գործարանի նախկին վարչական շենքը բնակելի շենքի վերակառուցելու շինարարական աշխատանքների և պետական գրանցման աշխատանքների ավարտից հետո բնակիչներին բնակարաններով ապահովում:

# ՏԵՂԵԿԱՆՔ

## <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՔԱՂԱՔԻ ՊԱՀԱԾՈՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆԻ ՆԱԽԿԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԸ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՎԱՐՏԻՑ ՀԵՏՈ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N 1414-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻՆ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

<<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի պահածոների գործարանի նախկին վարչական շենքը բնակելի շենքի վերակառուցելու շինարարական աշխատանքների ավարտից հետո պետական գրանցման աշխատանքները պատշաճ կազմակերպելու ու իրականացնելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 19-ի N 1414-Ն որոշման մեջ լրացում կատարելու և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանին գումար հատկացնելու մասին>> ՀՀ կառավարության որոշման ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխությունների կամ լրացումների անհրաժեշտություն չկա:

## ՏԵՂԵԿԱՆՔ

## <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՔԱՂԱՔԻ ՊԱՀԱԾՈՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆԻ ՆԱԽԿԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԸ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՎԱՐՏԻՑ ՀԵՏՈ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N 1414-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻՆ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

<<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի պահածոների գործարանի նախկին վարչական շենքը բնակելի շենքի վերակառուցելու շինարարական աշխատանքների ավարտից հետո պետական գրանցման աշխատանքները պատշաճ կազմակերպելու ու իրականացնելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 19-ի N 1414-Ն որոշման մեջ լրացում կատարելու և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանին գումար հատկացնելու մասին>> ՀՀ կառավարության որոշման ընդունման կապակցությամբ ՀՀ 2014 թվականի պետական բյուջեով ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից նախատեսվում է հատկացնել 2,711.4 հազ. դրամ:

# ՏԵՂԵԿԱՆՔ

«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի պահածոների գործարանի նախկին վարչական շենքը բնակելի շենքի վերակառուցելու շինարարական աշխատանքների ավարտից հետո պետական գրանցման աշխատանքներն իրականացնելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 19-ի N 1414-Ն որոշման մեջ լրացում կատարելու և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանին գումար հատկացնելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ

Նախագծի անհրաժեշտությունը պայմանավորված է հետևյալով.

ՀՀ կառավարության 12.04.2012թ. N 501-Ն որոշմամբ ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի պահածոների գործարանի նախկին վարչական շենքը բնակելի շենքի վերակառուցման համար 2012 թվականին ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից ՀՀ Արմավիրի մարզպետարանին է հատկացվել է 244,170.0 հազ. դրամ:

Վերը նշված աշխատանքների ավարտից հետո համապատասխան վթարային շենքի բնակիչներին շենքի բնակարանները սեփականության իրավունքով հատկացնելու համար նախատեսվող պետական գրանցման աշխատանքները պատշաճ կազմակերպելու ու իրականացնելու նպատակով անհրաժեշտ է 2711.4 հազ. դրամ, այդ թվում՝

ա) Շենքի ընդհանուր մակերեսի, հողամասի, յուրաքանչյուր բնակարանի չափագրման և նոտարի կողմից մատուցվող ծառայության համար՝ 1,330.4 հազ. դրամ,

բ) Պարտադիր վճարների կատարման համար՝ 1,381.0 հազ. դրամ:

Նախագծով առաջարկվում է ՀՀ 2014 թվականի պետական բյուջեով նախատեսված ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից ՀՀ Արմավիրի մարզպետարանին հատկացնել 2,711.4 հազ. դրամ: